

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԻԻ ԿՈՂՄԻՑ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ ընդունվում են նուիրատուութիւններ օգնելու խօշորայով հիւանդացած, կամ խօշորայից մեռած մարդկանց աղքատ ընտանիքներին: Հաւաքած փողերը, քաղաքագլխին ղեկավարութեամբ, սանիտարական խմբերը կը բաժանեն կարօտեալներին, ըստ չափու կարօտութեան, և հանգամանքներին նայած օգնութիւնը կը լինի ինչպէս փողով, այնպէս և անհրաժեշտ իրեղէններով:

3—3

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ դրութեան մէջ են մեր բանւորները.— Ներքին ՏԵՆՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօշորայի մասին. Օրվայ չարիքը. Զր պետք է վախենալ խօշորայից. Նամակ բաժնուհի. Նամակ Ալեքսանդրօպօլից. Նամակ խմբագրին. Ներքին չարիքը.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսի ուսումնական խորհրդի հրապարականք:— ԽԱՆՆԱԿԱՆ ԿՈՒՐՄԵՐ.— ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ.— ԲՈՐՄԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԻՆՉ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԵՃ ԵՆ ՄԵՐ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

Այն ժամանակից, երբ Անդրկովկասում սկսեց ծաղկել մասնաւոր արդիւնաբերութիւնը, մեր երկրում կազմակերպվեց և զործարանական բանւորների դասակարգը: Այդ դասակարգի վիճակի մասին թէ՛ բաժնուհի և թէ՛ մանաւանդ բազուի մէջ բաւական զբաղվեց մեր մամուլը: Նրանց աննախանձելի վիճակը կարողացրեց նոյն իսկ մեր վէպերից մի քանիսներում:

Աննախանձելի ենք ասում, որովհետեւ իրանք պանդուխտ, տղէտ, ու թշուառ այնքան հասկացողութիւն էլ չունեն, որ իրանց վիճակը իրանք գիտակցաբար կարողանային բարձրել: Ինքնօգնութեան սկզբունքները միջոցով իսկ զործարանատերերը շատ քիչ են հոգում, շատ քիչ են մտածում այդ բանւորների փոքր ի շատէ մարդավայել կեանքի մասին:

Մեր զործարանատերերը, մեր կապիտալիստները միմիայն մտածում են իրանց անփոխան շահի մասին, առանց մտածելու այն կենդանի մեքենաների մասին, որոնք իրանց ձեռքի աշխատանքով, իրանց դառն քրտնքով կրկնապատկում են ձեռնարկութիւնից ստացվող զործարանատիրոջ տարեկան դուռ արդիւնքը: Ցանկի դարձնել իրանց բանւորների տնտեսական դրութիւնը, սանիտարական պայմանների մէջ լինել նրանց կացարանը, դուռն ղնել, որ բանւորներն ունենային քիչ թէ շատ օրինաւոր ապրուստ, սնունդ և խմելու մաքուր ջուր, հոգայ նրանց մտաւոր կրթութեան մասին, ունենալ զործարանին կից մի հիւանդանոց, որպէս զի հիւանդացած ժամանակ իրանց համար անհրաժեշտ աշխատող-բանւորը ապաստան ունենայ, դարձան ու բժիշկ ունենայ,—այդ բոլորը մասին երբեք չէին էլ մտածում մեր զործարանատերերը: Բանւորը նրանց աչքում մի անշունչ առարկայ էր, որը պէտք է օրական 24 ժամ բանէր միմիայն տիրոջ շահ տարու համար: Այդ դեռ բաւական չէ, մեր զործարանատերերը ոչ թէ միայն չէին մտածում իրանց բանւորների թշուառ վիճակը փոքր ի շատէ բարձրելու մասին, բայց և աշխատում էին, որքան հնար էր, զնչին օրավարձ տալ բանւորներին, որպէս զի իրանց արդիւնաբերական ձեռնարկութեան տուած գում արդիւնքը աւելի խոշոր լինի: Այդ հարատահարական միջոցներէն մինն էր և պահպանել հնարաւոր միջոցութեան բանւորներին իրար մէջ... Այդ կողմից շատ ձեռնառու էր մանաւանդ մեր Բազուի զործարանատերերին վարձել Պարսկաստանից եկող կեղտոտ, սակաւապէտ, է-ժան վարձով բաւականացող պարսիկ բանւորներին:

Սակայն այդ բոլորի հետեանքն ի՞նչ էր. պարսիկ բանւորները համ իրանք կեղտոտ լինելով վարակում էին իրանց բնակած

տեղի օդը, ջուրը, գետինը և այդպիսով նպաստում էին իրանց ներկայութեամբ երկրի հակառողջական վիճակի վառարանում, համ էլ իրանց սակաւապէտութեամբ իջեցնում էին ուրիշ մշակների այնպէս էլ չնչին օրավարձի գինը մինչև աներեւակայելի minimum.

Ընթերցողն երեւի յիշում է, որ մի քանի տարի առաջ Հիւանդացի Ամերիկայի համարակազմութեան կառավարութիւնը ուշադրութիւն դարձնելով այն երեւոյթի վրա, որ չափից դուրս խնայող, իրանց ներքին կենցաղավարութեան մէջ կեղտոտ, սակաւապէտ չինացի բանւորները, մեծ թւով գաղթած լինելով Ամերիկա իրանց ներկայութեամբ ահազին վնաս են հասցնում բնիկ ամերիկացի բանւորին, աներեւակայելի կերպով իջեցնելով աշխատող ձեռքի օրավարձը, քանի որ ամերիկացի բանւորն անկարող լինելով մրցել եկող չինացի բանւորների բազմութեան հետ, ինքն էլ ստիպված է զործարանատերերից ընդունել այն աննշան օրավարձը, որը տրվում է չինացի սակաւապէտ բանւորին, այն ինչ ամերիկացի բանւորը ընտելացել էր աւելի օրինաւոր կեանքին, նրա մարդկային պահանջները աւելի ընդարձակ էին, նա պահանջ ուներ, իր բանւոր տեղով, մարդկայել կերպով ապրելու,—այդ բոլորը աչքի առջև ունենալով ամերիկական կառավարութիւնն արգելեց չինացիներին Ամերիկա գաղթելու, փակեց այդ մարդկային մուրհիկ առջև մուտքը դեպի երկրի ներքին...

Այժմ գրեթէ նոյն երեւոյթը, միայն աւելի փոքր չափով, կրկնվում է մեր նաւթային աշխարհում: Աղբերանեան թերակողմ զործարաններում գրեթէ նոյն ընթերցողութիւններ են հաստատվել աւելի մարդկայել կեանքի պահանջ ունեցող հայ մշակների և սակաւապէտ ու կեղտոտ, պարսիկ պանդուխտ մշակների մէջ... Հայ մշակների օրավարձի գինը Բազուի և նրա շրջակայ զործարաններում անդադար իջնում է իջնում էր՝ շուրջով պարսիկ բանւորների հակամարդկային կենցաղավարութեան, նրանց կեղտոտ կեանքի ու մարդկային արժանաւորութիւնը վերաւորող ծայրայեղ սակաւապէտութեան, շուրջով այն մրցման, որը շատ ձեռնառու էր աղահայ, բայց անհետաճիտ զործարանատերերին, սակայն կորստաբեր ոչ թէ միայն հայ, բայց նոյն իսկ տեղական թուրք և պարսիկ մշակներին... Յայտնի է որ կովկասեան թուրքն ու պարսիկը անդադար շփվելով քրիստոնեայ տարրի հետ անհամեմատ աւելի մեծ պահանջ ունեն մարդկայել կեանք վարելու, քան աննախանձ վիճակի մէջ ապրող նրանց պարսկաստանցի կրօնակիցները:

Հասաւ խօշորայի պէս արեւոտ,— և ահա այդ տեսակ անհետաճիտ տնտեսական սխառեմայի հետեանքն երեւաց: Գործարանատերերի ազահոյութեան շուրջով հայ և տեղացի մահմետական մշակը մնացին թշուառ ու նիւթապէս վերին աստիճանի անապահով զրուլութեան մէջ, իսկ եկեղ պարսիկ, էժան գնով բանող և մեր կապիտալիստների համար ձեռնառու եղած բանւորը իր կեղտոտ կենցաղավարութեամբ է պիղծեմայի տարածման ամենանպաստաւոր զործիչ հանգիստացաւ...

Մենք կարծում ենք, որ մեր արդիւնաբերական կեանքի մէջ առաջ եկող այդ մշտական աննպաստ պայմաններից ու լի-

նելի տնտեսական կորստաբեր կրիզիսներից ազատ մնալու համար՝ անհրաժեշտ են երկու բաներ. նախ՝ որ մեր մշակների շրջանի մէջ մտցնել մտաւոր և բարոյական գիտակցութիւն, սերմանալի նրանց մէջ ինքնագործունէութեան, ընկերական ոգու և ինքնօգնութեան սկզբունքը, որպէս զի այդ սկզբունքի միջոցով նրանք վերջապէս կարողանային իրագործել իրանց մէջ փոխարժեքն օգնութեան վրա հիմնված այլ և այլ օգտաւէտ հաստատութիւններ, օգտաւէտ ընկերակցութիւններ, իսկ երկրորդ՝ որ մեր կառավարութիւնը, օգտակար Հիւանդացի Ամերիկայի օրինակից, արգելէր պարսկաստանցի մահմետական մշակներին անդադար պանդուխտել դէպի մեր երկիրը, արգելէր նրանց անցնել ուստաց սահմաններից այս կողմը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՒՐԱՅԻՆ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի Միքայելեան հիւանդանոցում յուլիսի 20-ին առաւօտեան կային հիւանդներ՝ 11 տղամարդիկ և 4 կանայք. օրվայ ընթացքում աւելացան 3 կանայք և 1 տղամարդ. կարածէ (Դիւղմ գիւղից), Ժարկով (8-դ քաղ.), Տէր-Մարտիրոսով (5-դ քաղ.) և վարվարա Դանդաձէ (9-դ քաղ.)— բոլոր դէպքերն էլ կառնածիլ են: Դուրս են գնացել հիւանդանոցից 2 տղամարդիկ՝ Զիլանշիլի և Կարաչեւ: Եւստ քաժանութեան են փոխադրված 2 տղամարդիկ և 1 կին՝ Կուզմին, Խալաթով և Կալաշնիկովա, գիշերվայ ընթացքում հիւանդանոց մտնողներ չը կային. գիշերը մեռան 3 տղամարդիկ՝ Տէր-Մարտիրոսով, Օսիպով և Կալաշնիկ. փոխադրված է մի այլ քաժանութեան տղամարդ Ժարկով: Յուլիսի 21-ին առաւօտեան Միքայելեան հիւանդանոցում կային հիւանդներ 6 տղամարդիկ և 4 կանայք:

Մահմետականների ժամանակաւոր հիւանդանոցը հիւանդներ չեն մտել յուլիսի 21-ին: Առաւօտեան յուլիսի 21-ին 2 հիւանդներ կային:

Հիւանդացել են և տանն էին բժշկվում. յուլիսի 20-ին Լաչկարով, 35 տարեկան (Նովայա-Վոլանդի), Սօֆիա Կաղիշեկա, 20 տարեկան (Նովայա-Վոլանդի), ոտքիկապակներով դիւանաւոր կառավարչի պաշտօնակատար Լեւոնադ Սպեգալսկի (Ելիզաւետիսկայա փող.) և Միքայել Արաբով, 10-դ քաղաքամասում:

Մեռելի բանտի հիւանդանոցն է ուղարկված Թիֆլիսի բանտի կալանաւոր Սերգէյ Տոմայեւ:

Թիֆլիսի գաւառապետը հաղորդում է, որ ՄԵՐՆԵՃ գիւղում հիւանդացել է 1 տղամարդ. Գոռեանի գիւղում յուլիսի 14-ին հիւանդացել են 3 հոգի, որոնցից 2 հոգի մեռել են:

Գորու գաւառապետը հաղորդում է, որ յուլիսի 20-ին Գորում խօշորայով հիւանդացել են՝ 4 հիւանդ, որոնք տանն էին բժշկվում, իսկ մէկ տղամարդ ուղարկված է խօշորային հիւանդանոց: Յուլիսի 20-ին մահվան դէպքեր չեն եղել. հիւանդներ կային 10 հոգի: Բորժումում աղգանաւում մի կին: Սաղիխուրի գիւղում մեռել է 1 գեղջիկ: Բուխի գիւղում յուլիսի 19-ին մեռել է 1 տղամարդ: Ուրբնիսի գիւղում մեռել է 1 կին: Յուլիսի 20-ին 3 հիւանդներ են մնացել: Յրամուխա գիւղում յուլիսի 18-ին մեռել է 1 գիւղացի:

Միլանի գաւառապետը հաղորդում է, որ Յարակի-Կոլոզի գիւղի մօտ գետոված գաղթականներն մէջ եղած 3 հիւանդներից, յուլիսի 16-ին մեռել է 1 կին. նոր հիւանդացողներ չը կային. վերին-Մալխանի և Միլգանի գիւղերում խօշորայով հիւանդացել են 3 հոգի, որոնցից մեռել

է 1. բոլոր երեքն ևս հիւանդացել են Շիրակի անապատում:

Բորչալուի գաւառապետը հաղորդում է, որ Կօչուր գիւղի մօտ դաշտի վրա գտնված է խօշորայով հիւանդ մի ինչ-որ պարսիկ, որը յուլիսի 14-ին գիշերը մեռել է: Զվէլ-Քվէլի գիւղում յուլիսի 15-ին մեռել է խօշորայով կարա-Հուսէյն-օղլի:

Դուշեթի գաւառի Զիգուրի գիւղում յուլիսի 16-ից մինչև 21 հիւանդացել են 17 հոգի, մեռել են 10. Բիցչնդի գիւղում հիւանդացել և մեռել է 1 հոգի. Զիգուրի գիւղի գիւղում հիւանդացել են 5, մեռել են 4 հոգի:

Բազուի նահանգական վարչութիւնը հաղորդում է, որ յուլիսի 18-ին Բազուի խօշորային հիւանդանոցն են մտել 5, մեռել են 2, առողջացել են 7, մնացել են 50 հոգի: Հիւանդանոցից դուրս մեռել են 4, նահանգում հիւանդացել են 122, մեռել են 51, առողջացել են 17, մնացել են 121. ղրնուրական հիւանդանոցում կային 29, Բազուի բանտում հիւանդացել է 1, մնացել են 7 հոգի:

Դաղստանի գիւմուրական նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 18-ին Ծուրայում հիւանդացել է 1, Պետրովսկիում հիւանդացել են 26, մեռել են 15, Դեբրէնդում հիւանդացել են 10, մեռել են 2, առողջացել են 3, չըջաններում հիւանդացել են 619, մեռել են 232, առողջացել են 219. մնացել են հիւանդներ Ծուրայում 3, Պետրովսկում 73, Դեբրէնդում 15, չըջաններում՝ Կիւրինսան 250, Կապադո-Տարասարանեան 152, Սամուրեան 157, Դարվինեան 88, Կաղիկումուխեան 157, Ծուրայեան 196, Դուրեբեան 1, Ավարեան 9 հոգի:

Երևանի նահանգական վարչութիւնը հաղորդում է, որ յուլիսի 17-ին Նախիջևանում մնացել էին 47 հիւանդներ, հիւանդացել են 9, մեռել են 12, առողջացել են 13, մնացել են 31 հոգի. գաւառում կային 39 հիւանդներ. նոր հիւանդացողներ չը կային. Բաշուրայեանում կային 7, հիւանդացել են 9, մեռել են 16, մնացել են 7 հոգի. Ծարուրի գաւառում հիւանդացել են 9, մեռել են 4 հոգի. Ալեքսանդրօպօլի գաւառում՝ Կալանջիում կային 4 հիւանդներ, հիւանդացել է 1, մնացել են 5 հիւանդներ:

Ստավրօպօլի նահանգապետը հաղորդում է, որ Ալեքսանդրօպօլի գաւառի Կուրօպօլի գիւղում կըրկին հիւանդացել են 2, Կուրսովսկի ասանում 1, Ալեքսանդրօպօլում հիւանդացել է 1, մեռել է 1, Նովօգորբօրիսկի գաւառի Պրասկովայում հիւանդացել են 143, մեռել են 78, առողջացել են 43, հիւանդները 79 են. Կրէտ քաղաքում հիւանդացել են 11, մեռել են 4, Արխանգելսկում մեռել են 4 հոգի. Ստարոդուր ասանում հիւանդացել են 11, մեռել են 7, Պաստավում—8, մեռել են 2, Գորբովօնօում հիւանդացել է. Մեղլիժինեան գաւառի Սրէճի-Կոլոբկում հիւանդացել են 15, մեռել են 4, առողջացել է 1, հիւանդները 14 են. Առաւ Կամիշ Բուրուում հիւանդացել են 5, մեռել են 2 հոգի:

Գուրմայիսի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 18-ին Գուրմայիսի մեռել են 6, մնացել են 8 հոգի:

Բազուի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 19-ին Բազուի խօշորային հիւանդանոցն են մտել 8, մեռել են 2, առողջացել 4, մնացել են 52 հոգի: Հիւանդանոցից դուրս մեռել են 7. նահանգում հիւանդացել են 187, մեռել են 105, առողջացել են 62, մնացել են 91 հոգի: Զինուրական հիւանդանոցում կային 28, Բազուի բանտում հիւանդացել է 1, մնացել են 6 հոգի:

Դաղստանի նահանգապետը հաղորդում է, որ

յուլիսի 19-ին Շուրայում մեռել է 1, Պետրոս-
կում հիւանդացի են 22, առողջացել են 1, Գե-
րջնուտում հիւանդացի են 19, մեռել են 5, առող-
ջացել են 3: չընկնանքում հիւանդացի են 514,
մեռել են 276, առողջացել են 244, մնացել են
հիւանդանոցի Շուրայում 2, Պետրոսկում 68, Գե-
րջնուտում 26 հոգի: Շրջաններում՝ Կլերինեան
236, Կայտադո-Տարապարանեան 69, Շուրայի 223,
Ավարեան 18, Արդիեան 14 հոգի:

Երևանի նահանգապետը հաղորդում է, որ յու-
լիսի 18-ին Նախիջևանում կային 31, հիւանդա-
ցի են 11, մեռել են 12, առողջացել են 3, մնացել են 27: Բաշտորաշէնի գաւառում կային
7, հիւանդացի են 5, մեռել են 6, առողջացել
են 2, մնացել են 4 հոգի: Շարուրի գաւառում
հիւանդացի են 5 և մեռել են 5 հոգի: Ալէք-
սանդրոպոլի գաւառի Կոլոլեյում կային 5, հի-
ւանդացի են 1, մեռել են 2, մնացել են 4: Բա-
ղաբում հիւանդացի են մեռել է 1, չընկնանք-
ում հիւանդացի են 2, չամամիում և Մեծ-Ղա-
րաքիսայում հիւանդացի են մէկ մէկ, Ղաղարա-
պատում հիւանդացի են 5, մեռել է 1, մնացել
են 4:

Գուրաբի նահանգապետը հաղորդում է, որ
յուլիսի 19-ին Բոթրայում կրկին հիւանդացի են
խօլէրայով 2, առողջացել է 1, մեռնողներ չը-
կային, մնացել են 9 հիւանդներ:

Ղարաբի նահանգապետը հաղորդում է, որ յու-
լիսի 17-ին Երեկոյան Բաշտորաշէն գիւղում ե-
րևացել են խօլէրայի հիւանդութեան կասկածելի
նշաններ: Խօլէրայի տարածվել է այդտեղ հարկան
գիւղերից: Ալէքսանդրոպոլ գաւառի Ղաշան-Ղաշաղ
գիւղում յուլիսի 19-ին հիւանդացի են 30, մե-
ռել են 13, առողջացել են 2, մնացել են հի-
ւանդներ 15, առողջացել են 2, մնացել են հի-
ւանդներ 13, առողջացել են 2 կին: Բաշ-Շարա-
քեալի բժիշկը և չընկնանքում միջոցներ են ձեռք
առնում առանձնացնելու հիւանդութիւնը:

Նիսաւանդոպոլի նահանգապետը հաղորդում է,
որ յուլիսի 18-ին Շուրի քաղաքում հիւանդացի է
1, մեռել է 1, մնացել են 18: Գաւառում հի-
ւանդացի են 35, առողջացել են 16, մեռել են
19, մնացել են 32: Նիսաւանդոպոլ քաղաքում հի-
ւանդացի են 5, առողջացել են 5, մեռել են 5,
մնացել են 19 հոգի: Գաւառում հիւանդացի են
77, առողջացել են 7, մեռել են 58, մնացել են
55 հոգի: Նոյսի քաղաքում հիւանդացի են 11,
առողջացել են 4, մեռել են 8, մնացել են 11:
Գաւառում հիւանդացի են 30, մեռել են 21,
մնացել են 29: Զէքրայի գաւառում հիւանդա-
ցի են 19, առողջացել է 1, մեռել են 32, մնա-
ցել են 15: Զէքրայի գաւառում հիւանդացի են
37, առողջացել են 3, մեռել են 8, մնացել են
29, ընդամենը նահանգում կային 233 հիւանդ-
ներ:

ՕՐԱՆՆԱԿ ԶԱՐԻՔ

Ինչ էինք մի ամիս առաջ, ինչ ենք այժմ:
Սրանից մի ամիս առաջ անկարելի էր անցնել
Թիֆլիսի փողոցներով՝ առանց կսկիծի, տրուտու-
թեան և նոյն իսկ սարսափի: Խօլէրայի վտանգը,
անտույզ ապազան, երկիրով թէ՛ ահա մի քանի օ-
րից յետոյ Թիֆլիսն էլ կը դառնայ մի նոր Բա-
գու, այնպէս էր կուշ բերել մարդկանց, այնպէս
էր նեղը գցել, որ առանց կսկիծի չէր կարելի
նայել մարդկանց երեսին:

Ուր դնում էիք խօլէրա, ուր մտնում էիք խօ-
լէրա: Խոսակցութեան ուրիշ նիւթ չը կար: Մտա-
տանջութեան ուրիշ առարկայ չը կար: Մարդու
Աստուածը այն ժամանակ Բոսլիին և Հօֆմանի
կաթիլներն էին, և միակ ապաւենը՝ դեղատոնե-
րը...

Իսկ այժմ... Այժմ Թիֆլիսիցն ման է դալիս
ազատ, համարձակ, ինքնավստահ: Առաջվայ եր-
կիրդի փոխարէն մարդկանց երեսին կարգացվում
է յոյս, վստահութիւն: Նոյն իսկ ամբողջ լըջ-
ված է հաւատով: Չը կայ նախկին ատելութիւնը
դէպի սանիտարական միջոցները, դէպի հիւան-
դանոցը, դէպի բժիշկները, դէպի թէյատները և
զեղաբանները... Քաղաքային վարչութեան, ինտե-
լիգենտ անձանց և աղմկահարուցիկ ներկայա-
ցուցիչների անկեղծ, անձուտ և եռանդուն գոր-
ծունեութիւնը հաւատի բերեց մեր ամբողջին,
յարդից նրա կասկածոտութիւնը և այն բոլորին,

երբ շատ տեղերում ամբողջ սպանում է բժիշկ-
ներին, քանզում է հիւանդանոցները և ոչնչացնում
զեղինքէկցիայի միջոցները, նոյն բոլորին, ասում
ենք, մեղ մօտ, Թիֆլիսի ամբողջ գրկաբաց ըն-
դունում է այն բոլորը, ինչ որ անվում է յանուն
քաղաքի սանիտարական կերպարանափոխութեան,
և երբեք է իր մասին հողացողների արեւոյ...

Եւ շնորհիւ այդ միահամուռ, եռանդուն, խելա-
ցի և անձուտ գործունեութեան, վտանգը անց-
նում է վերջին օրերս, սկսած յուլիսի 17-ից
մինչև այսօր, Թիֆլիսում խօլէրայի դէպքերը
3—4-ից չեն անցնում: Մի երկու օր նոյն իսկ
մի և երկու դէպքեր եղան, և քաղաքի վրա տիրում
է այն յոյսը, որ ամենակարճ միջոցում կարող կը
լինենք միանգամայն արմատախիլ անել վտանգը...

Այդ յոյսը, անկասկած, կերպագործի, եթէ նոյն
եռանդով, նոյն հաւատով և նոյն անձուտիւր-
թեամբ շարունակվի քաղաքային ինքնավարու-
թեան, աղմկահարուցիկ, բժիշկների և ինտելի-
գենցիայի գործունեութիւնը, և եթէ մեր ամբողջ
էլ շարունակի հաւատով վերաբերվել դէպի Եւ-
կաւ և կուշ գործը...

Այն ժամանակ մենք կարող կը լինենք համ-
քաղաքը ազատել վտանգից, համ էլ բաց ձակա-
տով, համարձակ կերպով ասել ամենքին. «Որի-
նակ վերցրեք Թիֆլիսից, և տեսեք թէ ինչ հրաշ-
ներ կարող է գործել ժողովրդի բոլոր չընկնանքի
միահամուռ, դիտակցական և անձուտ գործու-
նեութիւնը»:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՐԴՈՒՄԻՅԸ

Այս վերնագրով մի յօդուած կայ «Русск.
Вѣдом.»-ի 180 №-ում, որը պատկանում է ուն
բժիշկ Ա. Ս.—ի:

«Խօլէրայն սրանով—ասում է բժիշկը—1823
թվից 8-րդ անգամն է, որ այցելում է Ռուսաս-
տանը. նա իր ամեն մի այցելութեամբ սարսափ
է տարածում եւրոպացու վրա, որովհետեւ նա շատ
չուտով է իր կործանիչ հետեւանքներն արտայայ-
տում: Նրա զարգացման և անձան խիստ նպաս-
տում են յատկապէս մարդու օրգանիզմը, կաղ-
մուածքը, որովհետեւ նա ուրիշ ոչ մի կենդանուն
չէ դիպչում: Խօլէրայի ծննդեան պատճառը միևրո-
օրգանիզմներն են, որոնք ստատիկայի արագու-
թեամբ բազմանում են մարդու արտաթորութիւն-
ների մէջ, մանաւանդ երբ նրանք դուրսն են գտն-
վում և օդի հետ յարաբերութեան մէջ են: Պարզ
է ուրեմն, որ արտաթորանքները խօլէրայի տարած-
ման գլխաւոր բոլորներն են. մանկելով, շարունակ
րանց թեթեւութեան, մարդուս բերանը՝ բա-
ցիւնները չնորոյժ իրանց թեթեւութեան թփ-
կում կարելի է հետ անցնում են մարդուս
ստամոքսը կամ աղիքները: Առողջ մարդու ստա-
մոքսում կայ միշտ մի որոշ քանակութեամբ մի
առանձին թթուութ, որն անուանվում է աղ ալիւն
թթութեամբ (СОЛЯНАЯ КИСЛОТА): Այդ թթութեան
մէջ խօլէրայի օրգանիզմները, որոնք ստորակէտի
ձև ունեն, չեն ապրում, բայց աղիքները մէջ, որ-
տեղ այդ թթութն չը կայ, նրանք մեծ առատու-
թեամբ բազմանում են: Հէնց այդ խօլէրայից հե-
տեւում է, որ ճաշ ուտելիս չը պէտք է շատ ու-
տել, որպէս զի աղ ալիւն թթութեամբ բուրդովին
չը խառնվի կերածի հետ ստամոքսի մէջ, այլ մի
քիչ թթութեան ասել մնայ: Իսկ միջոց չը պէտք
է ուտել, որովհետեւ նրանք լաւ չեն մարդուս առ-
հասարակ և խանդավառ են ստամոքսի ա-
ռողջութիւնը: Որովհետեւ թթութեան ներկայու-
թիւնը, ինչպէս ասեցինք, ստամոքսի մէջ անհրա-
ժեշտ է, լաւ կը լինէր, ասում է բժիշկը—եթէ
ջուր խմելիս, նրա հետ մի քանի կաթիլ թթութեան
խառնէիք (մի բաժակին 2-ից մինչև 5 կաթիլ)
կամ աղի թթութեամբ, կամ լիմօնի թթութեամբ, կամ
թէ հէնց քաջախի, մանաւանդ որ այդպիսով ջուրն
էլ շատ քիչ համ է ստանում: Որովհետեւ խօլէրա-
յին միկրօբները մեծ տաքութիւն չեն կարողա-
նում տանել, ուստի լաւ կը լինէր, զգուշութեան
համար, ջուրն եփ տալ, որպէս զի եղած բացիւն-
ը ոչնչանան, ապա ստացնել ջուրը և այնպէս
խմել: Պէտք է ամեն կերպ հող տանել, որ ստա-
մոքսի առողջութիւնը չը խանգարվի, դրա համար
հարկաւոր է կանոնաւոր կենքը վարել, արեւոյ-
դութիւն չանել, գիշերները երկար չը նստել, չա-
փաւոր կերպով ուտել և քնել: Որովհետեւ մենք
խօլէրային բացիւնների սովորութեան հետ ծանօթ
ենք, կարող ենք հետազոտել և պաշտպանել
նրանցից: Եթէ խօլէրայով հիւանդի մօտ ես, պի-

տի աշխատես նրա սպիտակեղէնը, գիշերվայ ա-
մանները և այլն, որոնց կարող է կաւած լինել
բացիլը—անվտանգ դարձնել, այսինքն տաք ջրի
մէջ եփ տալ, կամ գցել թթութեամբ ջրի մէջ: Հի-
ւանդի չորերին ձեռք տալուց յետոյ՝ պէտք է
ձեռքերը լուսնալ, որքան կարելի է տաք ջրի
մէջ, եթէ հիւանդի արտաթորութիւնները թափ-
ված են արտաքին» լաւ կը լինի, որ այնտեղից
դուրս դալուց յետոյ՝ բերանը թթութեամբ ջրով մի
լաւ ողորդել: Երբ որ խօլէրայի բացիւնները մտնում
են աղիքները՝ նրանց ներքին բարակ մաշկը ըս-
կաւում է կարմրել, ուռչել և շատ անգամ տեղ
տեղ պոկ դալ. մաշկը վայր ընկնելուց յետոյ, աղիք-
ները լցվում են ջրով, դանդաղան հեղուկներով, ա-
րիւնով, միջի եղածներն էլ ջուր դարձնում և սկիզբ
տալիս լուծողութեան: Եթէ մարդուս օրգանիզմը
այնքան պինդ է, որ լուծողութեամբ կարողանում
է բոլորովին դուրս վաճել իր միջից այդ միկրօ-
բներին,—նա շարունակում է ապրել, եթէ ոչ,—
մեռնում է: Բայց առհասարակ ամեն մի լուծո-
ղութիւն չը պէտք է վերադառնալ խօլէրայի աղի-
ցութեան: Եթէ հիւանդի արտաթորութիւնների
մէջ խօլէրային բացիւններ չը կան,—ուրեմն չը
կայ և խօլէրա, այլ դա պատճառված է ուրիշ
հանգամանքներից:

Բժիշկն իր յօդուածը պատկէս է վերջացնում.
«Համենայն դէպս՝ չը պէտք է վախնալ խօլէրա-
յից, որովհետեւ վախիտ, վստա ոգով գործը միշտ
պատերազմը տանուլ տուած է կուրը սկսելուց
առաջ: Պէտք է պարտաւստովել, ընդունել նրան քա-
ղութեամբ, դիտաւորապէս դիտակցաբար՝ նրա
տարածման բոլոր ճանապարհները վրա գործ դնե-
լով ամեն տեսակ արդեւներ՝ մեծ թիւով նրան չը
դոճկելու համար»:

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՅԸ

Յուլիսի 8-ին
Երբ օր առաջ քաղաքային դռման հետեւալ
յայտարարութիւնը պատկերին կայցնել տուեց.
«Ի նկատի ունենալով, որ քաղաքում խօլէրա-
յով մահվան դէպքեր են եղել, այսօրվանից ան-
պաշտան կերպով արգելվում է վարձուգի, սեխի,
ձմերուկի և առհասարակ ամեն տեսակ մրգեղ-
նի վաճառումը, ինչ տեսակի և յատկութեան էլ
լինէին նրանք. արգելվում է նմանապէս կվաւի,
մօրօքնիսօյլ և փողոցներում առու ջրի վաճա-
ռելը»:

Քաղաքում եղած մրգեղանքները ոչնչացրած են:
Նաւահանդիսան է տարված մեծ քանակութեամբ
(մի քանի հարիւր արկղ) թաց մրգեղէն, որոնց ոչ
չոգնեաւորը ընդունում են և ոչ թողնում են ներս
բերել քաղաք: Հրամայված է կամ հետացնել
կամ ծովը թափել:

Մինչև այժմ Բաթումում խօլէրայով միմիայն
երկու թուրքեր են մեռել. բայց բժիշկների նրանց
առողջացնելու համար գործ դրած միջոցները և
մեռնելուց յետոյ նրանց առանձին տեղում թա-
ղել տալը կիր ածելով նրանց գերեզմաններում
այսպիսի մի իրարանցում գցեց թուրք բանուր
դասակարգի մէջ, որ անկարող եմ ասել: Հաղաբից
աւել: Թուրքեր թողել են արդէն քաղաքը, և ան-
ցել Տաճկաստան և այն էլ ոչ թէ խօլէրայից
փախելով, այլ... կարող էք երևակայել սանիտա-
րական խնդրից և բժշկից:

Մենք մնալով այստեղ—ասում են նրանք—որ
դեաւուրները մեր մեռելներին կուպրի մէջ դնեն,
և նրանց գերեզմաններում քերթած են. ոչ, եթէ
մեռնելու ենք՝ թող մեր երկրում մեռնենք:
Գուման աչքի առաջ ունենալով մշակների կեղ-
տոտ տեղերում և հարկւններով միասին ապրելը՝
չինքն է տալիս քաղաքից մօտիկ մի մեծ կաղար-
մա, որտեղ կարգադրված է որ մշակները պիտի
երկու երկու մի անհնակում ապրեն և բժիշկը
միշտ պիտի նայի նրանց:

Մի քանի հարիւր բանուրներին թուրքաց հիւ-
պատուը կարողացած է լինում համոզել թողնել
իրանց դիտաւորութիւնը, խոստանալով ամեն
դէպքում իր օգուտիւնը նրանց. կարողանում է
հաւատարմել, որ իրանց լաւանքը դանդաղան
քաղաքայիններին հնարած լուրեր են իրանց փա-
խուտից օգտուելու համար և այլն: Մարդիկ հան-
գատնում են: Սակայն մի նոր դէպք ա-
րիւթ է տալիս այդ մարդկանց կրկին դիմելու հիւ-
պատուին և վճարական կերպով անցադիր պահան-
ջելու. ոչ մի համապետցիչ խօսք և խրատ նրանց
չաղղեց. «Եթէ Սուլէյման աղի քեթին էլ են դեղ

բունում, մենք որ դրանց ձեռքն ընկանք՝ մեղ հօ-
կը սպանեն ու կը սպանեն», ասում են նրանք: Այդ
Սուլէյման աղան մի հիւանդոտ մարդ է. երեկու-
յեան, դրան առաջ նստած ժամանակ, սկսել է
տեղանքալ և թուլանալ. բժիշկը պատահմամբ
տեսել է, հարցրել է ինչն է ցաւու, չէ պատաս-
խանել. բժիշկը կամեցել է նրա քեթին ինչ որ մի
սրտակ բռնել, որը Սուլէյման աղան չէ թողել և
սկսել է գոգոտալ, որ բժիշկը ուզում էր սպա-
նել իրան: Չեմ կարող, ի հարկէ, ձիւղն ասել,
թէ ինչպէս է պատահել այդ, սակայն այդպէս
են պատում բողբոջները: Հիւպատոսարանը և
տեղական իշխանութիւնները շատ աշխատեցին
չը թողնել նրանց և համոզել որ մնան, որովհե-
տեւ նրանց գնալով Բաթումի գործարանները և
չոգնեաւորը կրիտիկական դրութեան մէջ կընկ-
նեն բանուրի պակասութիւնից, սակայն, ինչպէս
ասեցի, ոչինչ չօգնեց, և երկէ մի քանի հարիւր
հոգի եւ հասարակ «ղայրներ» մէջ, (որոնք փայ-
տեղ մեծ նաւակներ են համարեա) անցան Տաճ-
կաստան: Ոչ մի չոգնեալ չընդունեց նրանց: Թէ
բժիշկներից և դեղերից ունեցած այդ մարդկանց
երկիրը որքան մեծ էր, եւ կը բերեմ մի փաստ,
որին ինքս ականատես եղայ. թիւրքաց հիւպատո-
սարանին մօտիկ ճարպեան կղզայրները զեղադո-
ծական մազաղին ունեն. երբ խանութի առաջ
հաւաքվում է մի քանի հարիւր հոգի, մազաղինից
դուրս են բերում ինչ որ զեղինքէկցիական զեղ և
սրկում խանութի առաջ: Ամբողջ յետ է փախ-
չում:

Մի տարօրինակ անձնասպանութիւն, որ տեղի
ունեցաւ երէկ և որը կապ ունէր այդ տաճիկների
գնալու հետ: Մի յոյն կապիտան, որն ունէր սեւ-
հական նաւ, պայմանաւորվում է այդ մարդկանց
հետ տանել նրանց Տրապիզոն 5000 լուրով:
Թղթերը մաքսատանը ուշացնում են. նեղանում է.
եթէ պիտի ուշանա և խօլէրան ինձ տանի—
ասում է նա—աւելի լաւ է թող ձկներն ուտեն
ինձ. ծովի մարդը ծովումն էլ պիտի մեռնի:
Գուրս է գալիս մաքսատանից, որտեղ կարծում են
որ նա կատակ է անում և առանց այլ և այլու-
թեան իրան ծովն է գցում: Որքան ման եկան՝
գիւղը անկարող եղան գտնել:

Գործարաններում բանուր դժուար է ճարվում.
դներն անասելի թանգացել են, օրեկան 1 ռ. 50
—2 ռ. ստացողներ կան մշակ բանուրներից:
Քաղաքում տիրում է հանգստութիւն. բացի յի-
շածս թուրքերից և մի քանի յոյներից փախչողներ
չը կան, մանաւանդ բարձր դասակարգից. քաղա-
քը լաւ է պահպանվում:

ՆԱՄԱԿ ԱՆԻՔԱՆԻՐՈՊՈՒՅԸ

Յուլիսի 26-ին
Մեր ժողովուրդը ինքզնութիւնից զուրկ մի
ժողովուրդ է: Ամեն բան, ամեն հողա նա գցում
է Աստուծու վրա և կը ցանկանայ, որ նա իր
հողը քաշէ:

Մի ամենից աւելի էր, որ անձրեւ չէր գալիս: Գիւ-
ղացին աչքերը երկնից յաւած՝ նախախնամութիւ-
նից անձրեւ, անձրեւ էր պահանջում: Ինչ անէր
նախախնամութիւնը, երբ նրան ստեղծելիս պար-
գեղ է նրան խելը, առողջ կազմուածք և ուժեղ
ձեռքեր ու ոտքեր: Մեր գիւղացին երբ սեղմը
գետին գցեց թէ չէ, էլ կարծես պրծաւ իր գոր-
ծից. մնացածը թողնում է, որ նախախնամութիւ-
նը ինքը հողայ: Նա երբեք չէ կարողանում
մտածել անգամ, որ այդ իսկ նախախնամու-
թիւնը նրան պարգևել է հարուստ բարեկեցութիւն
օժտված մի երկիր, որից խելօք մարդը կարող է
մեծ հարստութիւն քաղել: Մեր գիւղացիք, փոխա-
նակ իրանց երկիրը կանոնաւորելու, փոխանակ
իրանց հողը պարարտացնելու, փոխանակ օգտուելով
այն հարկւրաւոր առուակներից ու գետակներից,
որոնցով լի է մեր երկիրը, փոխանակ իր աշ-
խատած փողերը իր ստացուածքի վրա ծախելու,
որ նա հեղուկեղ ասելի չտուտ արդեւը ստանայ,
նա այդ փողերը տանում էլ ջնում է աւելակաւա-
ն և բիւ և դանդաղան պաշտօնեաների փողը, որպէս
զի կարողանայ պատժել տալ իր դրացուն, որով-
հետեւ նրա եղն իր արտն է մտել: Առաւօտեանից
մինչև երեկոյ մեր գիւղացուն դու կը տեսնես
քաշ դալիս մի դատաւորից միւսի մօտ, մի ար-
լակաւից՝ դէպի միւսը և մի պաշտօնեայից՝ միւսի
մօտ և կամ կը գտնես նրան պառկած թէ հաշ-
տարար դատարանի և թէ ոստիկանատան պատե-
րի տակ: Ինչու են եկել դրանք և կամ ինչ են

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՌԱՐԱՆ ԿԱՆՈՒ

Ազգային կենտրոնական վարչութեան ուսումնական խորհուրդը, որ քանի մը շաբաթ առաջ հրապարակեալ, կը բաղկանար Կ. Պոլսոյ հայ հասարակութեան ամենէն զարգացեալ անդամներէն. իր անդամոց երկուքը Գերմանիոյ մէջ համալսարանական կրթութիւն առած են, երկուքը Կայսերա-Սերայի լիսէին ամենէն փայլուն չորսնաս-լարաներէն և յետոյ կայսերական վարժարանէն վկայեալ յաջողագոյն փաստաբաններէն են. մին բաւական յաջող գրադէտ մ'է, վերջապէս մնացեալներն ալ ուսնալ և կարող անձնաւորութիւններ են. առանց չափազանցութեան կարելի է ըսել, թէ հրապարակ ուսումնական խորհուրդը մինչև ցարդ եղածներուն լաւագոյնն էր. թէ ինչու այս մարմինն հրաժարական տուաւ հասարակութիւնը ոչինչ տեղեկութիւն չունի, որովհետեւ մամուլին հրամայեալ էր կատարեալ լռութիւն պահել. մանաւանդ թէ Գաղաքական ժողովոյ յայտարարութեամբ այս ուսումնական խորհուրդը իբր ըմբոստ և անպատկառ ամբաստանուած էր. «Արեւելք» ալ, մեծերը շոյելու քաղաքականութեամբ հանրածանօթ, մեծ և խեղճութեամբ պարբերութիւններով խմբագրականի մը մէջ Գաղաքական ժողովոյ այդ ամբաստանութեան իր կողմանէ ոյժ տուած են. Հրաժարեալ ուսումնական խորհուրդը ասոր դէմ շատ բաներ ունէր ըսելիք. բայց իրեն լռութիւն պատուիրած էր, ուրիշ կերպ չէր կարող վարուել, և լռեց: Ահաւասիկ բուն եղելութիւնը:

Տէրութեան օրինաբ, որ վերջերս ասելի խիստ հանգամանք մը առած է, ամեն ուսուցիչ պարտի ուսումնական խորհուրդ կողմանէ վկայական ունենալ, այնպէս որ վերջին ատեններս ուսումնական խորհուրդոյ նիստերը մեծաւ մասամբ գրաւուած էին ուսուցչաց և ուսուցչուհեաց վկայականներ բաշխելով. հայ քահանայ մը, որ հայերէն լեզուի ուսուցիչ էր և վկայական չունէր, տէրութեան օրէնքը յարգելով կը ներկայանայ ուսումնական խորհուրդին և հայերէն լեզուի վկայական կը խնդրէ. խորհուրդը յիշեալ քահանային հայերէն լեզուի մէջ ունեցած հմտութիւնը քննելէ յետոյ կու տայ նմա պահանջուած վկայագիրը, և որովհետեւ վկայականները խորհուրդը դիւանին ստորագրութիւններէն զատ պարտին կրկն նախագահին ստորագրութիւնն ալ քահանային վկայականը պատրիարքին կը ներկայացնեն, որ իբր նախագահ ստորագրէ, պատրիարքը վկայականը կարգա-ցածին պէս բարկութեամբ թուղթը կը պատուէ պոստով. ուսումնական խորհուրդ մը, զուտ աշխարհականներէ բաղկացեալ, ինչ ձեռնհասութիւն և ինչ իրաւունք ունի քահանայի մը վկայական տալու: Խորհուրդը իրուր կարելի է թէ տրուած վկայականը քահանայագործութեան վկայական մը չէր, ալ պարզապէս հայերէն լեզուի ուսուցչութեան վկայական մը. պատրիարքը անդրադուլի կը մնայ, և ոչ միայն այսչափ: Քաղաքական ժողովոյ նիստին մէջ պատրիարքը անդամներէն Պէրպէրեան էֆէնդիին պաշտօն կը յանձնէ, որ երթայ ուսումնական խորհուրդին ատենապետ և կարգ մը տղաքն եր ուն թ և թ և ս օ լ ի կ գ օ ր ծ ե ր ղ ու ղ և բ ար ե փ ի խ է (այն ատեն ուսումնական խորհուրդը ատենապետը անձնական գործի մը համար հրաժարական մատուցած էր): Ըստ սահմանադրութեան (որ ինչպէս գիտե՞ք ամիսն մը ի վեր պաշտօնապէս չ'ընդունաւ), Գաղաքական ժողովը իրաւունք չունի ուսումնական խորհուրդոյ ատենապետը ինքն անուանելու, ալ միայն անդամներէ կընտրէ և անդամը ալ իրենք իրենց մէջ դիւանը կընտրեն: Ուստի պատրիարքին այս որոշումը, թէ սահմանադրութեան հակառակ էր և թէ ուսումնական խորհուրդոյ անդամոց արժանապատուութիւնը չարաչար կը վիրաւորէր, քանի որ զանոնք տղայ անուանած էր. արդէն ասկէ առաջ ալ ուսումնական խորհուրդի վկայականը պատուելով, պատրիարքը յայտնի թշնամանք մըրած էր խորհուրդին դէմ. ուստի ուսումնական խորհուրդը կորույ խմբովին հրաժարել, բայց ցոյց տալու համար, թէ իրեն եղած անիրաւութեան լիովին գիտակից է իւր սովորական նիստը կազմելով ինքնին իրեն ատենապետ կընտրէ

իր անդամներէն պ. Զաքարեան, որով Պէրպէրեանի ինքնակող ատենապետութիւնը շուրջ կերթայ. խորհուրդի ատենապետը ամենայն փափկութեամբ Պէրպէրեանի դիմել կուտայ, թէ այս ընտրութեամբ ուսումնական խորհուրդը երբէք ուրացած չէ Պէրպէրեանի արժանիքը, ալ սկզբունքի խնդիր մը և ցոյց մ'է լոկ վարչութեան որոշման դէմ, և թէ՛ երբ Պէրպէրեան խորհուրդին մասնակցէր իբր պարզ անդամ և ոչ իբր ատենապետ, արդէն խորհուրդը կանխաւ համաձայնած էր Պէրպէրեանին ընտրել իրեն ատենապետ: Քաղաքական ժողովը, բոլորովին միապետական սննդի բաղկացած, որոց զլուծմէ է պատրիարքը և Սիմօն-պէյը, կը կատարի ուսումնական խորհուրդ այս նոր տղայութիւն և ան դէմ և նոր թշնամանքներ կը տեղայ անոր դիմելու. ուսումնական խորհուրդը ի վերջոյ իր պատճառաբանեալ ընդարձակ հրաժարականը կը մատուցանէ, որուն մէջ կ'ընդունուի ի վեր կը հանէ այն սխալներն և պարտազանցութիւններն, զորս պատրիարք և վարչութիւնը գործեցին այս խնդրին մէջ. այս հրաժարական, շատ պերճախօս լեզուաւ մը խմբագրուած, պատիւ կը բերէ ուսումնական խորհուրդը անդամոց և որչափ կը յիշենք իր տեսակին մէջ առաջինն է, պատրիարք և վարչութիւն այս հրաժարականէն ալ սաստիկ կը ներանան (պատրիարքն իր չփոթութեան մէջ մինչև իսկ կ'ուրանայ քահանային վկայականը պատուած ըլլալ): Ուստի կորույն այս հրաժարականը ընդունել և նախորդ ուսումնական խորհուրդը անդամները ազգային իշխանութեան դէմ ըմբոստ յայտարարել:

Այս է արա ուսումնական խորհուրդը հրաժարման բուն պատմութիւնը:

Պոլսեցի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շատ անգամ պատահել է որ կանայք բժշկական ուսումնական արտօնութեան յետոյ արժանացել են Պարիզի համալսարանին բժշկականութեան դոկտորի կոչումը ստանալու: Բայց մի քանի շաբաթ քննելու առաջ Պարիզի համալսարանը առաջին անգամ մի օրինակի յատկացրեց իրաւագիտութեան դոկտորի աստիճանը: Այդ ուսումնական աստիճանը ստացողն է օրինակ Ժաման Զովին, որը իրաւաբանական ֆակուլտետին ներկայացրեց մի գրութեան հետեւալ վերնագրով. «Կանայք համար մատչելի պրոֆէսիաները, և կ'ընդ զարգացնեն պատմութիւնը հասարակութեան մէջ, միայնակ նրա անտեսական վիճակի զարգացման հետ»:

Այս օրերս վախճանվեց Ֆրանսիայի Նանտի քաղաքում մի ուսուցչուհի Վիթինի Մօվէ, որը ծնվել է 1797 թվին: Նրա հայրը դատարանակցի նրան Բուսսօի «Էմիլ» գրքի գաղափարներին համաձայն և հանդուգնալով միայն 18 տարեկան հասակում սկսեց գրել ու կարգաւ սովորել: Ապա, երբ նա ուսուցչուհի դարձաւ, նա հիմնեց մի օրինակի ուսումնական: Արդէն 1852 թ. զիջած ունի 500 հազար ֆրանկ գումարի կարողութիւն և թողեց ուսուցչութեան պաշտօնը: Նորեւում, այն է 1890 թվին նա ընծայեց Նանտի քաղաքին 400 հազար ֆրանկ գումար, քաղաքային հիւանդանոցի օգտին: Այժմ վախճանվելով Վիթինի Մօվէ դարձաւ մի խոշոր գումար է կապել Նանտի քաղաքին, բարեգործական նպատակներով: Քաղաքը դիտարկութիւն ունի հանդուգնալի յիշատակին մի արձան կանգնեցնել:

Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքում այս օրերս լոյս տեսաւ «Հայոց Պատմութիւն» վերնագրով գիրքը, անդիմերէն լեղումով: Գրքի հեղինակն է պ. Գարրիէլեան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիս: Հարց է յարուցված կանոնադրութեան հրէական բարեգործական ընկերութիւնների գործունէութիւնը: Երեկ ամերիկական տուրիստների մի խումբ ճանապարհ ընկաւ դէպի Մոսկովա. պիտի այցելէ Նիժնի-Նովոգորոդ և Վոլգանոյն նահանգները:

Թէ՛՛՛՛՛՛՛, 20 յուլիս: Պարսկաստանի մի քանի նահանգներում խօշորմ դադարել է:

ԲԵՐԼԻՆ, 20 յուլիս: Կառավարութիւնը վճռեց

հրաժարվել Բերլինում միջազգային ցուցահանդէս կազմելուց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիս: Հրատարակված է կարգադրութիւն, որով 1886 թվի յունիսի 13-ի կանոնադրութեամբ որոշված մի քանի արտօնութիւնները պէտք է տարածվեն այն կանանց վրա, որոնք ծառայում են պոստային-հեռագրական վարչութեան մէջ:

ԼՕՆԴՕՆ, 21 յուլիս: Գերմանական կայսրը եկաւ Ուայտի կղզին՝ Վիկտորիա թագուհուն այցելութիւն տալու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 21-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	99	ր.	95	կ.
Բերլինի վրա 100 մարկ	48	ր.	85	՝
Պարիզի վրա 100 ֆրանկ	39	՝	60	՝
Ռուսի	արծէ	7	՝	99
Մաքսայի կուպոններ	160	՝	25	՝
Արծաթ	1	՝	08	՝
Բորսայի դիվիդենդներ	4	՝	51/2	՝
Պետ. բանկի 5% տոմս 1 չլֆանի	103	՝	50	՝
— — — — —	2-րդ	՝	103	՝
— — — — —	3-րդ	՝	—	՝
— — — — —	4-րդ	՝	—	՝
— — — — —	5-րդ	՝	—	՝

— — — — —	6-րդ	՝	102	՝	50	՝
6% ոսկեայ ընտա	161	՝	75	՝	—	՝
4% ոսկեայ փոխառութիւն	—	՝	—	՝	—	՝
Արեւելան 5 % փոխառ. 1-ին չլֆ.	—	՝	—	՝	—	՝
— — — — —	2-րդ	՝	102	՝	50	՝
— — — — —	3-րդ	՝	104	՝	50	՝
Ներքին 5% առաջին փոխառութ.	235	՝	25	՝	—	՝
— — — — —	կրկրորդ	՝	223	՝	50	՝
Պետական երկաթուղային ընտա	104	՝	50	՝	—	՝
5 1/2 % ընտա	—	՝	—	՝	—	՝
4% ներքին փոխառութեան	95	՝	—	՝	—	՝
5% գրաւ. թղթ. ադն. կայ. բանկի	102	՝	—	՝	—	՝
Ադն. կայ. բանկի խաղաղութեան գրաւ. թղթ.	193	՝	—	՝	—	՝
5 1/2 % վկայակ. գիւղ. հող. բանկի	104	՝	75	՝	—	՝
4 1/2 % գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	153	՝	25	՝	—	՝
— — — — —	թղթադ.	102	՝	—	՝	՝

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները 101 ՝ 75 ՝
Մոսկույի քաղաք. օբլիգացիաներ. 101 ՝ 25 ՝
Օրէսայի 102 ՝ — ՝
Թիֆլիսի — ՝ — ՝
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կայ. բանկի. — ՝ — ՝
— — — — — Գուրմայիսի — ՝ — ՝
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը անգործ է:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳԻՒՌՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԽՕԼԵՐԱՅԻ

դէմ նախապատրաստական միջոցներին դիմելու և առհասարակ նրա դէմ կուռու համար ԱԽԱԼ-ԳԱԼԱՔ քաղաքի աղաքանկութիւնը ցանկանում է իր սեփական ԲԺԻՇԿ ունենալ, ամանակ 300 (երեք հարիւր) ռուբլի ռոճիկով: Ուստի խնդրում ենք այն բժիշկներին, որոնք կը ցանկային վարձվել՝ ՀԵՌԱԳՐՈՎ դիմել քաղաքի ղեկավարատ Գովհանէս Գարութիւնեանցին. г. Ахалкалаки, городского депутату Ивану Арутюнову.

Է Վ Է Լ Ի Ն Ա

ԳԻՒՌՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՎԷԿ (Հոգեբանական էտիկա).
Գինը 50 կօպէկ (պօստի ծախսով)
Ծախվում է. «Մշակի» խմբագրատանը, Կենտրոնական և Խիդէկիի գրաւաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Գովհանէսովի գրաւաճառանոցում.
(№ 126) 6—20

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԻՆԵԱՆԻ

(Կուլիկա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են աժիւս օր, բացի կիրակի օրերէն:

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻՆԵԱՆ—11—12 ժ. (և ատամնադատի) սիֆիլիսի և աչքացաւի	
Գ. Գ. ՐՈՒՂԻՍԵԱՆ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.	
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12 1/2—1 ժ. ներքին և երեխայոց ց.	
Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը	
Ա. Բ. ԱԼԵԿՍԵՅԵՎ—5—6 ժ. ներքին ց. և երկտարբուծութեան:	
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.	
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻՆԵԱՆ—6—7 ժ.	
Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուծութեան.	
Վ. Տար—50 կ. Համախորհրդի (կոմիտեի) համար ատանձին:	
29—52 (5)	90—№ 79

ՓԱՅՏԻ

ՄԵՐ ՊԱՀԵՍ (կայարանի մօտ, Կօրգանովի ձիաքաշի գծի վրա):
Վաճառվում է մաս-մաս, սկսած 1/8 խորանարդ սաճէնից. չորր խոհանոցի և հացագործների համար, ամենամատչելի զնով: Նոյն տեղը գնում են մեծ քանակութեամբ փայտ անտառատէրերից:
№ 56 10—10 (5)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է պաշտօն ունենալ խանութներում, կամ գործարաններում և գրասենյակներում:

Գիտէ լաւ հայերէն հաշուապահութիւն, նոյնպէս և տաճիկերէն:
Հասցէն. Авадарт, Вахтангская улица, № 17. (№ 80) 3—3



Մ. Գ. ՑԵՑԵԼԻՆԻ

ԵԱՄԱՅՈՑՅԵՆԻ ՄԱԿԱԶԻՆԻ

ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԵՆՏՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՕՎԵՐ, ՋԵՐՄԱՍՏԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կաշեկոն և թէ վանանների համար վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿԱՄԱԼ ջերմաչափեր: Լօրենտի և պէնսելի համար ոսկեայ, արծաթեայ, նոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր:

Ակնոցներ և պէսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագազինում յանձն են առնում նմանապէս փաշած իրերի նորոգելու և ապակիների զննելու:

ԳՆԵՐԸ ամենաշափաւոր են:

46—50 (5)

